ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԹՈՒՐ ԿԵՍՈՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի մայիսի 8-ից մինչև 2023 թվականի հուլիսի 18-ը աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի փորձագետ Մարինա Մանուկյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ:

1. Հաշմանդամություն ունեցող անձանց ոլորտում իրականացվող բարեփոխումների շրջանակում մասնակցում եմ անձնական օգնականի ծառայության ներդրման պիլոտային ծրագրի համակարգման աշխատանքներին և տարաբնույթ առցանց և առկա քննարկումներին:

Մասնավորապես՝

Մասնակցել եմ Մոնտենեգրոյի հետ կազմակերպված առցանց քննարկմանը՝ իրենց երկրում արդեն իսկ իրականացվող անձնական օգնականի ծառայության տրամադրման փորձի փոխանակման նպատակով:

«Նորք» ՍԾՏԻԿ-ի ՝ ֆունկցիոնալության գնայիատման նոր՝ e-disability համակարգից ստացված ՖՄԴ-ով գնահատված ֆունկցիոնալության սահմանափակման միջին, ծանր և խորը աստիճանի հաշմանդամություն ունեցող անձանց տվյալներից (1492 անձ)՝ հեռախոսազանգերի միջոցով ֆիլտրել եմ անձնական օգնականի ներդրման նոր ծառայության պիլոտային ծրագրի շահառուների թիրախային խումբը՝ 20 չափահաս, 13 երեխա:

Մասնակցել եմ անձնական օգնականների ֆիլտրման գործընթացին՝ անձնական օգնականների առցանց դիմումների հարթակից, ՄՍԾ տարածքային կենտրոններում աշխատանք փնտրող անձանց տվյալների

ցանկից և նպաստառուների համակարգից ստացված անձանց տվյալների ցանկերից՝ ըստ շահառուների և պոտենցիալ անձնական օգնականների փաստացի բնակության հասցեների հնարավորինս աշխարհագրորեն մոտ լինելու չափանիշի:

Մասնակցել եմ ՄԱԿ-ում կազմակերպված առկա քննարկմանը՝ տարբեր երկրներում անձնական օգնականի ծառայության տրամադրման և շահառուների թիրախային խմբերի ընտրության վերաբերյալ:

Ներկա եմ եղել անձնական օգնականի վերապատրաստման դասընթացների համար նախապես տարածված հայտարարությամբ հավաքագրված դասընթացավարների կողմից ներկայացվող մոդուլների առցանց քննարկմանը:

Մասնակցել եմ ԱՍՀՆ աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտում կազմակերպված անձնական օգնականի վերապատրաստման հնգօրյա դասընթացներին:

Անձնական օգնականի ծառայության տրամադրման պիլոտային ծրագրի իրականացման աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են:

2. Պատասխանել եմ քաղաքացիների դիմում-բողոքներին: Ներկայացված դիմում-բողոքները մանրամասն ուսումնասիրվել են, տրամադրվել են համապատասխան պարզաբանումներ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և արտոնությունների, անձնական օգնականի ծառայության ներդրման և մի շարք այլ հարցերի վերաբերյալ :

3. Իրականացրել եմ հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և և սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցման վերաբերյալ հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված («Կարիտաս-Արեգակ» ՀԿ, «Մայրի» ՀԿ, «Լիարժեք Կյանք» ՀԿ, «Փրկություն» ՀԿ, «Աստղավարդ» ՀԿ) հաշվետվությունների ընդունման, հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունների և համապատասխան գրությունների կազմման աշխատանքներ:

4. Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի պետի հանձնարարությամբ ուղարկել եմ տարաբնույթ և բազմաթիվ գրություններ տարբեր գերատեսչություններին, մարմիններին, տեղային և միջազգային կազմակերպություններին:

Փորձագետ՝ Մարինա Մանուկյան

18.07.2023թ.